ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 1945-1947թթ.

ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ

1923թ. Լոզանի կոնֆերանսում Հայկական հարցը թաղվեց Եվրոպական դիվանագիտության ձեռքերով, իսկ Ազգերի լիգան անկարող եղավ ինչ-որ կերպ թեթևացնել ցեղասպանության ենթարկված և աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի վիճակը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայկական սփյուռքը հիմնականում համախմբվել էր Միավորված ազգերի շուրջը, տասնյակ հազարավոր հայեր կռվել էին ԱՄՆ-ի և Անգլիայի բանակների շարքերում, եվրոպական երկրների դիմադրության շարժման մեջ: Հատկանշական է, որ սփյուռքահայությունն իր հույսը հիմնականում կապել էր ԽՍՀՄ-ի և նրա բանակի հաղթանակի հետ: Այդ իսկ պատճառով տարբեր երկրներում կազմակերպվեցին սփյուռքահայության ազգային խորհուրդներ, որոնք խնդիր դրեցին բոլոր միջոցներով օժանդակել Խորհրդային բանակի հաղթանակին, հավատալով, որ հաղթանակը վերջ կդնի ազգային աղետի՝ ցեղասպանության հետևանքներին, և որ իրենք հնարավորություն կստանան վերադառնալ հայրենիք:

Այդ կազմակերպությունների նպատակն էր՝ Մեծ տերությունների առջև բարձրացնել Թուրքահայաստանի խնդիրը, հասնել նրան, որ Թուրքիայի կազմում գտնվող հայկական տարածքները միակցվեն Խորհրդային Հայաստանին, քանզի հանրապետությունը, իր փոքր տարածքով, հնարավորություն չուներ ընդունելու աշխարհով մեկ սփռված ավելի քան մեկ միլիոն հայերին:

ԽՍՀՄ կառավարության կողմից խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության՝ 1945թ. մարտի 19-ի պայմանագրի դենոնսացիայի մասին լուրն առնելուն պես սփյուռքահայության շրջաններում ավելի է ամրապնդվում պատերազմից հետո հայկական տարածքների վերադարձման հավատը, նոր թափով է ծավալվում համաշխարհային հանրությանը Հայկական հարցի էությունը ներկայացնելու համար ակտիվ գործունեությունը:

Ապրիլի 5-ին Փարիզում տեղակայված Հայ փախստականների կենտրոնական կոմիտեի նախագահ Արշակ Չոպանյանը դիմում է Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպան Ալեքսանդր Բոգոմոլովին: Շարադրելով Թուրքիայի հայ բնակչության եղեռնի և բռնագաղթի պատմությունը, Առաջին համաշ-

խարհային պատերազմից հետո դաշնակիցների երկերեսանի քաղաքականությունը, Չոպանյանը հայտնում է, որ հայ գաղթականության երազանքն է վերադառնալ պատմական հայրենիք, որը պետք է միանա Խորհրդային Հայաստանին: Ապա հույս էր հայտնվում, որ դեսպանը հայ փախստականների ցանկությունը կհասցնի ԽՍՀՄ կենտրոնական և Խորհրդային Հայաստանի կառավարություններին, իսկ ԽՍՀՄ ներկայացուցիչները Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսի օրակարգում կդնեն Թուրքահայաստանի ազատագրման հարցը:[1]

Ապրիլի 7-ին Նյու Յորքում գտնվող Հայկական ազգային կոմիտեն հեռագիր է հղում Ստալինին, հուսալով, որ նա մոռացության չի տա հայերի արդարացի պահանջը: Մասնավորապես նշվում է, որ հայերը «... չեն մոռացել Ձեր պատմական հայտարարությունը Թուրքահայաստանի իրավունքների մասին և հաստատ համոզված են, որ Դուք նորից կվերանայեք այդ իրավունքները համակրանքի նույն ոգով»:[2]

Մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ, դոկտոր Համազասպ (Համո) Օհանջանյանը դիմում է երեք մեծ տերությունների ղեկավարներ Ստալինին, Տրումենին և Չերչիլին ու խնդրում՝ ամեն ջանք գործադրել հայ ժողովրդին հուզող՝ բազմադարյա հայրենի հողի նկատմամբ իրավունքների վերականգնման հարցը լուծելու համար:[3]

Սփյուռքահայ կազմակերպությունները մեծ հույսեր էին կապում հատկապես 1945թ. ապրիլին Սան-Ֆրանցիսկոյում բացվելիք Միավորված ազգերի կոնֆերանսի հետ, և Ամերիկայում գործող հայկական երկու կազմակերպություններն էլ հուշագրերով դիմում են այդ կոնֆերանսին:

Ամերիկայի հայկական ազգային խորհրդի (որի կազմի մեջ մտնում էին ամերիկահայ բոլոր կուսակցությունները, հասարակական, մշակութային ու կրոնական կազմակերպությունները, բացառությամբ՝ ՀՀԴ-ի) հուշագրում նշվում էր, որ հասել է ժամանակը Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող հայկական տարածքը միացնելու Խորհրդային Հայաստանին, ինչը հնարավորություն կտար տարբեր երկրներում բնակվող մեկ ու կես միլիոն հայերին վերադառնալ հայրենիք:[4]

Այնուհետև՝ նշելով, որ դաշնակիցներն Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայերին խոստացան ազատագրում, իսկ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը որոշեց անկախ Հայաստանի սահմանները, որը սակայն չիրականացավ, քանզի մեկը մյուսին հաջորդող հանդիսավոր խոստումները մոռացվում էին կամ զոհաբերվում հզոր տերությունների սեփական շահերին, նշելով Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ դեմոկրատիան և առաջադիմությունը պաշտպանած հայ ժողովրդի նվաճումները, հուշագիրը, մասնավորապես, մատնանշում էր այն փաստը, որ. «... պատերազմի ժամանակ հայերը կրկին անգամ ապացուցեցին իրենց նվիրվածությունը դեմոկրատիային և Միավորված Ազգերի գործին: Նրանք նորից պայքարեցին և աչքի ընկան ամերիկյան բանակի շարքերում և Միավորված մյուս ազգերի բանակներում: Միայն Կարմիր բանակում կար 50 հայ գեներալ և ավելի քան քառորդ միլիոն հայ զինվոր», այնինչ Թուրքիան «...ապաստան էր որոնում կեղծ չեզոքության քողի տակ, միևնույն ժամանակ ցույց տալով նացիստներին ամեն տեսակ օգնություն»:[5] Կրկին անգամ հիշեցնելով, որ Հայաստանի մի մասը, որտեղ հայերն ապրել են անհիշելի ժամանակներից մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, մնում է Թուրքիայի տիրապետության ներքո, այն ժամանակ, երբ մեկ ու

կես միլիոն հայեր ապրում են որպես գաղթականներ և վտարանդիներ աշխարհի տարբեր ծագերում, հուշագրի վերջում նշվում էր, որ հասել է ժամանակը, որպեսզի թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական նահանգները միացվեն Խորհրդային Հայաստանին, որպեսզի արտասահմանում գտնվող հայերը կարողանան վերադառնալ իրենց օջախները, քաղաքներն ու գյուղերը: Հուշագիրն ավարտվում էր հույսով, որ «... այս անգամ հայ ժողովուրդը խաղալիք չի դարձվի ուժի քաղաքականության միջազգային շախմատային տախտակի վրա»:[6]

Հայ հեղափոխական դաշնակցությունը, որը հանդես էր գալիս «Հայկական ազգային կոմիտե» անվամբ, Սիմոն Վրացյանի ստորագրությամբ նույնպես հուշագրով դիմեց Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսին: Հուշագիրն իր բովանդակությամբ շատ չէր տարբերվում առաջինից, բացառությամբ, որ այստեղ փաստերն ավելի ճշգրիտ էին ու հավաստի: Զգալի տեղ էր հատկացված Հայաստանի առաջին հանրապետությանը, Սևրի պայմանագրին, Հայկական հարցի վերաբերյալ Ազգերի լիգայի բանաձևերին: Եվ ամենակարևորը, եթե Ազգային խորհուրդն առաջարկում էր հայկական տարածքները միացնել Հայաստանին, ասել է թե՝ Խորհրդային Միությանը, ապա Հայկական ազգային կոմիտեն պահանջում էր հայկական տարածքներից և Խորհրդային Հայաստանից ստեղծել նոր՝ Հայկական հանրապետություն:[7] Սակայն հետագայում ՀՀԴ-ն ստիպված էր հաշտվել իրերի դրության հետ և իր հետագա գործունեության հիմքում դնել հայկական տարածքները Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջը:

Հայկական սփյուռքը մեծ հույսեր էր կապում Մեծ տերությունների ղեկավարների հերթական կոնֆերանսի հետ, որն իր աշխատանքները սկսեց հուլիսի կեսին, Բեռլինի Պոտսդամ արվարձանում: Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդը հուլիսի 19-ին հեռագիր է հղում Մեծ տերությունների երեք ղեկավարներին՝ Հայկական հարցը կոնֆերանսի օրակարգում ընդգրկելու համար: Հեռագրում, ի մասնավորի, ասվում էր. «Մենք հավատում ենք, որ Դուք կընդունեք որոշում հայ ժողովրդի արդարացի պահանջները բավարարելու մասին: Հայերին պետք է տրվի հնարավորություն կրկին վերաբնակվել իրենց պատմական հայրենիքում՝ հայկական նահանգներում, որոնք ներկայումս գտնվում են Թուրքիայի կազմում և որոնք այժմ պետք է վերադարձվեն նրանց միակ օրինական տիրոջը՝ Խորհրդային Հայաստանին»:[8]

Վկայակոչելով հայ ժողովրդի պատմական անցյալը, հեռագրի հեղինակները նշում էին, որ հայերն առաջինն են ընդունել քրիստոնեությունը և ավելի քան մեկ ու կես հազարամյակ պատվար են եղել կիսավայրենի հորդաների դեմ, որոնք ձգտել են նվաճել Եվրոպան: Իսկ հետո Հայաստան ներխուժեցին թուրք-օտտոմանները և ավելի քան հինգ հարյուրամյակ նրան ենթարկեցին ճնշման, թալանի և պարբերական ոչնչացման: Կազմակերպելով հայերի ջարդեր 1895-1896թթ., այնուհետև՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Թուրքիան, Գերմանիայի աջակցությամբ, իրագործեց հայ բնակչության զանգվածային ոչնչացում: Այնուհետև նշելով պատերազմին դաշնակիցների կողմում հայերի մասնակցության, ինչպես նաև հայերին տրված դաշնակիցների խոստումների անկատար մնալու փաստերը, ուշադրություն հրավիրելով Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի քաղաքականության վրա, հեռագրի հեղինակները գրում էին. «Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայերը

մի անգամ ևս ցուցաբերեցին ազատության իրենց ձգտումն և քաջաբար կռվեցին Միացյալ ազգերի, հատկապես ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի բանակներում ... Այժմ հասել է ժամանակը, երբ թուրքերը պետք է վճարեն հայերին՝ դարավոր անարդարության համար, թեպետ նրանք երբեք չեն կարող քավել իրենց մեղքը: Մեկ ու կես միլիոն հայեր այժմ ապրում են Խորհրդային Հայաստանից դուրս: Նրանց մեծ մասը ցանկանում է վերադառնալ իր նախահայրերի երկիրը և մասնակցել նրա վերականգնմանը:

Հայկական ծագմամբ ամերիկացիները, ինչպես և ամբողջ աշխարհի հայերը խնդրում են Պոտսդամում ընթացող կոնֆերանսին հայ ժողովրդի հարցն ընդգրկել իր օրակարգում, որպեսզի ընդունվի արդարացի որոշում, որը հնարավորություն կտար հայերին կրկին վերադառնալ իրենց պատմական հայրենիքը, և որ այդ հողերը միացվեն Խորհրդային Հայաստանին»:[9]

Պոտսդամի կոնֆերանսի հասցեով տարբեր գաղթօջախներից հեռագրեր են ուղարկում նաև հայկական այլ կազմակերպություններ: Հարավային Ամերիկայի հայկական գաղութների գործադիր կոմիտեն օգոստոսի 3-ին հեռագրում է Պոտսդամ՝ խնդրելով ազատագրել հայկական նահանգները և միացնել դրանք Խորհրդային Հայաստանին:[10]

Ռումինիայի հայկական գաղութի ներկայացուցիչները հուլիսի 31-ին հանրահավաք են գումարում և Թուրքիայի հայկական տարածքները Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջով դիմում են Մեծ տերությունների երեք ղեկավարներին:[11]

ԱՄՆ-ի բազմաթիվ ազդեցիկ հայկական կազմակերպություններ դիմեցին 1945թ. սեպտեմբերին Լոնդոնում ընթացող ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդակցությանը, պահանջելով Թուրքիայի հայկական տարածքները վերադարձնել և միացնել Խորհրդային Հայաստանին: Մասնավորապես՝ հայ ժողովրդի կարևորագույն այս խնդիրն արդարացիորեն լուծելու պահանջով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին են դիմում Ամերիկահայերի ազգային խորհրդի Նյու Յորքի բաժանմունքի զանգվածային հանրահավաքի, Քոնեքթիքութի նահանգի Բրիջպորտ և Հարթֆորդ քաղաքներում գումարված զանգվածային հանրահավաքների մասնակիցները: Ֆիլադելֆիայի ամերիկահայերի ազգային խորհրդի նախագահ, հայտնի բանաստեղծ Կարապետ Սիտալը պահանջում է, որպեսզի «... հայկական տարածքները, որոնք ներկայումս գտնվում են Թուրքիայի տիրապետության ներքո, դառնան Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը»:[12]

Համանման պահանջով հանդես է գալիս Ռոչեսթրում (Մասսաչուսեթսի նահանգ) կայացած Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության 62-րդ ամենամյա համագումարը:[13]

Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը Լոնդոնի խորհրդակցությանը հղած ուղերձում նշում է. «Արդեն վաղուց հասել է ժամանակը, որպեսզի հայերի հանդեպ ցուցաբերվի արդարացի վերաբերմունք: Մենք կոչ ենք անում հայրենադարձել մեկ ու կես միլիոն թուրքահայերին, որոնք ցրված են աշխարհով մեկ և Թուրքիայի հայկական գավառները միացնել ազատ Խորհրդային Հայաստանին»:[14]

Խորհրդակցությանը դիմում են նաև Կալիֆորնիայի, Վիսքոնսին նահանգի Ռեյսին քաղաքի հայերը, Ֆրանսիայի և Ռումինիայի հայկական

գաղութները, Ամերիկայի հայկական ավետարանական միությունը:

Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչ Միսակյանը սեպտեմբերի 7-ին, Լոնդոնում ԽՍՀՄ արտգործնախարար Մոլոտովին, իսկ պատճենները՝ մյուս երկրների նախարարներին է հանձնում հուշագիր՝ հայ ժողովրդի ցանկությունների և օրինական պահանջների մասին: Ներկայացված փաստաթղթում, ներկայացնելով Հայկական հարցի վերաբերյալ հիմնական տեսանկյունները, ՀՀԴ-ն պահանջում էր մշակել պատշաճ ծրագիր, որով Թուրքիային կառաջարկվեր՝ հօգուտ Խորհրդային Հայաստանի հրաժարվել այն բոլոր տարածքներից, որոնք, նախագահ Վիլսոնի սահմանմամբ, հատկացվել էին Հայաստանին:[15]

Հայկական սփյուռքը մեծ ակտիվություն ցուցաբերեց նաև երեք տերությունների արտաքին գործերի նախարարների մոսկովյան խորհրդակցության օրերին: Պահանջը նույնն էր՝ Թուրքիայի հայկական տարածքները միացնել Խորհրդային Հայաստանին:[16]

1946թ. հունվարին Լոնդոնում գումարված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանի օրերին բազմաթիվ հայկական կազմակերպություններ իրենց հեռագրերով, ուղերձներով նորից պահանջում էին անդրադառնալ Հայկական հարցին: Լիբանանի հայկական ազգային խորհուրդը Սիրիայում և Լիբանանում ապրող 200 հազար հայերի անունից պահանջում էր Խորհրդային Հայաստանին միացնել Թուրքիայի կողմից բռնազավթած տարածքները: Նստաշրջանին են դիմում նաև Եգիպտոսի, Ուրուգվայի, Արգենտինայի, Շվեյցարիայի հայկական գաղութների ներկայացուցիչները, Փարիզում գործող՝ Թուրքահայաստանի պաշտպանության կոմիտեն:[17] ՀՀԴ-ի անունից Միսակյանը նստաշրջանի նախագահին է հանձնում հուշագիր, որտեղ պահանջ էր դրվում «... առաջին՝ վերամիավորել Խորհրդային Հայաստանին ԱՄՆ-ի նախագահի սահմանած հայկական գավառները՝ համաձայն Սևրի պայմանագրի: Այդ պահանջին հակադրել այն փաստարկը, թե այդ գավառներում հայեր չեն մնացել, համազոր է թուրքական հանցագործությունների արդարացմանը: Այժմ աշխարհում հաշվվում է ավելի քան 3,5 միլիոն հայ, որոնցից 2,5 միլիոնը գտնվում է Խորհրդային Միությունում: Երկրորդ՝ հայրենադարձել և վերականգնել 1915թ. զանգվածային ջարդերից հետո կենդանի մնացած հայերի իրավունքները, որոնք այժմ գտնվում են արտասահմանում, հիմնականում՝ Մերձավոր Արևելքում: Երրորդ՝ Թուրքիայի կողմից համապատասխան պատերազմական տուգանքի վճարում այն ամբողջ ունեցվածքի համար, որը ոչնչացվեց, քանդվեց, խլվեց և բռնագրավվեց թուրքական կառավարության և ժողովրդի կողմից համաշխարհային պատերազմից առաջ, ընթացքում և հետո»:[18]

Հայկական սփյուռքն իր պահանջներով դիմում էր նաև անմիջականորեն Մեծ տերությունների ղեկավարներին, արտաքին գործերի նախարարներին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, Խորհրդային Հայաստանի ղեկավարներին: Այդպիսի առաջին դիմումը հղվեց Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսին մասնակցող Վ. Մոլոտովին: Այդ դիմումով Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը, նշելով, որ 1920թ. նոյեմբերի 29-ի խորհրդայնացումը Հայաստանին փրկեց թուրքական վտանգից և ներքին աղետից, արտասահմանի հարյուր հազարավոր աշխատավոր ժողովրդի անունից խնդրում էր օժանդակել հայկական տարածքների ազատագրմանը:[19]

Համանման խնդրանքով Ստալինին դիմեցին Բեյրութի, Հունաստանի, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղութների ներկայացուցիչները, Ամերիկայում գործող Տարոն-Տուրուբերան կազմակերպության ամենամյա համագումարը:[20] Խարբին քաղաքի հայկական հասարակությունը 1945թ. հոկտեմբերի 7-ի հանրահավաքից հետո նամակով դիմեց գեներալիսիմուս Ստալինին, որտեղ, ի մասնավորի, ասված է. «Մենք՝ հայերս տույնով դիմում ենք Ձեզ, սիրելի Իոսիֆ Վիսարիոնի, որպես մեծ առաջնորդի և ազատատենչ ժողովուրդների պաշտպանի, և թախանձալի խնդրում ենք Ձեզ օգնել մեր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին միացնել 1920թ. և դրանից առաջ զավթած տարածքները, որոնք պատմականորեն պատկանում են մեզ»:[21]

Սփյուռքից բազմաթիվ հեռագրեր էին ստացվում նաև Խորհրդային Հայաստանի ղեկավարության հասցեով: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Պապյանի անունով հեռագրեր ստացվեցին Բուենոս-Այրեսից, Բեյրութից, Սան-Պաուլոյից, որոնցով իրենց համերաշխությունն էր հայտնվում հայկական տարածքների պահանջատիրությանը:[22]

ՀՀԴ-ի ազդեցության ներքո գտնվող Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի Հայկական հարցի հանձնաժողովը 1945թ. օգոստոսի 18-ին ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ս. Կարապետյանին ուղարկեց նամակ, որով ցանկանում էր Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը տեղյակ պահել հայկական հարցի գծով հանձնաժողով ստեղծելու, նրա նպատակների, կատարած աշխատանքների մասին: Այդ հանձնաժողովի նպատակն էր՝ բարձրացնել և պաշտպանել Հայկական հարցը, իսկ այդ հարցի ներքո նրանք հասկանում էին.

1. Նախագահ Վիլսոնի որոշած գծի սահմաններում Թուրքահայաստանի միացումը Խորհրդային Հայաստանին:

2. Թուրքերի կողմից տեղահանված բոլոր հայերի վերադարձը Հայաստան:

Նամակում նշվում էր, որ չնայած Ամերիկայի հայկական գաղութը վաղուց բաժանված է հակադիր հոսանքների և այժմ էլ շարունակում է մնալ այդ հոսանքների պայքարի թատերաբեմում, սակայն Հայաստանի և Հայկական հարցի հանդեպ նրանք չունեն տարաձայնություն: Բոլոր հոսանքները հոգեպես կապված են Խորհրդային Հայաստանին, նրանում են տեսնում իրենց ազգային երազանքի իրականացումը և պատրաստ են ցանկացած ինքնազոհության՝ հանուն նրա բարգավաճման:

Նամակը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Մենք ուրախ կլինեինք ստանալ Ձեր կարծիքը և խորհուրդները, որպեսզի ներդաշնակենք մեր գործողությունները Հայաստանի ընդհանուր շահերի ու նպատակների հետ»:[23] Այն ստորագրել էր հանձնաժողովի նախագահ, դոկտոր Արմենակ Ալիխանյանը:

Նամակի առթիվ ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմը հայտնում է կենտկոմի առաջին քարտուղարին. «Ամեն ինչից երևում է, որ դաշնակները արտասահմանում ձգտում են վաստակել քաղաքական կապիտալ այսպես կոչված Հայկական հարցում, հարմարվելով ներկա պահին ստեղծված իրադրությանը: Իրականում, ինչպես վկայում են փաստաթղթերը և նոր մեքենայությունները, նրանք շարունակում էին Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի հանդեպ իրենց թշնամական քաղաքականու-

թյունը, հանդիսանալով օտարերկրյա պետությունների, մասնավորապես անգլիական ռեակցիայի գործակալներ... Ելնելով վերաշարադրանքից ՀԽՄՀ ԱԳԺԿ-ն գտնում է նպատակահարմար անպատասխան թողնել դաշնակցության կազմակերպությունից ելնող ցանկացած նամակ, հուշագիր և այլ դիմումներ: Միաժամանակ անհրաժեշտ ենք գտնում մեր մամուլի էջերում դիմակազերծել դաշնակների թաքնված երկերեսանի մեքենայությունները»:[24] Կարծում ենք՝ Խորհրդային Հայաստանի ղեկավարության նման գործելակերպի մեկնաբանությունն ավելորդ է:

1946թ. մայիսին ԱՄՆ-ի տասնվեց հայկական կազմակերպություններ ուղերձով դիմեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, որով խնդրում էին Անվտանգության խորհրդի օրակարգ մտցնել Հայկական հարցը, աջակցել հայ ժողովրդի պահանջների կարգավորմանը, նրան հնարավորություն տալ վերադառնալու իր հայրենիքը: Ուղերձում նշվում էր, որ չորս միլիոն հայեր ամբողջ աշխարհում պահանջում են, որպեսզի Խորհրդային Հայաստանը ստանա Կարսը, Արդահանը, Էրզրումը, Տրապիզոնը, Բիթլիսը և Վանը, որոնք Վիլսոնի որոշմամբ պետք է տրվեին Հայաստանին: «Թուրքիան չկարողացավ հասնել իր նպատակին՝ ամբողջ հայ ժողովրդի ոչնչացումով «լուծել» Հայկական հարցը: Պատմական Հայաստանը մաքրված է հայերից, բայց այն չի վերածվել թուրքական հողի: Թուրքահայաստանն այժմ քիչ է բնակեցված և ամայացված է: Եթե Թուրքահայաստանը վերադարձվի հայերին, ապա կկրկնվի Խորհրդային Հայաստանի 25-ամյա ծաղկման զարմանահրաշ պատմությունը, և համաշխարհային քաղաքակրթությունը կշահի այդ հանձնումից»:[25]

ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին համանման ուղերձներ հղեցին Կալիֆորնիայի թեմի առաջնորդ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը և Ամերիկայի հայկական ազգային խորհրդի Ֆիլադելֆիայի բաժանմունքը:[26] Գալֆայանը, մասնավորապես, գրում էր, որ եթե Հայաստանը նորից պետք է տուժի մեծ տերությունների ընչաքաղցությունից և հակամարտությունից, ապա մարդկությունը կհամարձակվի՞ արդյոք խոսել արդարության մասին:[27]

Հայկական տարածքների պաշտպանության օգտին հանդես եկան նաև արտասահմանյան մի շարք երկրների պետական ու հասարակական գործիչներ, զանգվածային լրատվության միջոցներ: Հայկական սփյուռքն իր նպատակին հասնելու համար փորձեց օգտագործել նաև քրիստոնեական եկեղեցին: ԱՄՆ-ի չորս մեծ կազմակերպություններ՝ Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը, Հայերի շահերի պաշտպանության ամերիկյան կոմիտեն, Հյուսիսային Ամերիկայի հայ եկեղեցու բարձրագույն հոգևորականությունը և Ամերիկայի հայկական միսիոներների ասոցիացիան հուշագրով դիմեցին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ժամանակավոր կոմիտեի Ժնևի նստաշրջանին, որպեսզի Եկեղեցիների համաշխարհային խորհուրդն ավելի քան մեկ միլիոն հայ փախստականներին հայրենիք վերադառնալու խնդրում բարոյական աջակցություն ցույց տալու նպատակով դիմի ՄԱԿ-ին: Հայաստանի շահերի պաշտպանության կոմիտեն իր անդամներ, նստաշրջանի պատգամավորներ, Եկեղեցիների միջազգային խորհրդի ամերիկյան քարտուղար Լեյֆերին և պրոֆեսոր Հորթոնին հանձնարարեց ակտիվորեն բարձրացնել Հայկական հարցը: Ամերիկայի հայ միսիոներները, հայկական ավետարանչական եկեղեցու անունից, Եկեղեցիների համաշխարհային խորհրդից պահանջում էին միջնոր-

դել համաշխարհային կոնֆերանսներին, «հորդորել Թուրքիային խաղաղ ճանապարհով Խորհրդային Հայաստանին վերադարձնել տարածքները, ինչպես վերապահված է Սևրի պայմանագրում»:[28]

Սփյուռքահայության շրջանում մեծ խանդավառություն առաջացրեց Խորհրդային Հայաստանի ղեկավար Գրիգոր Հարությունյանի 1946թ. փետրվարի 1-ի նախընտրական ճառը, որտեղ նա ՀԽՍՀ անունից դրեց «Թուրքիայի կողմից զավթած հայկական մարզերի» վերադարձման հարցը:[29]

Հայկական սփյուռքի ձեռնարկած միջոցառումների շարքում կարևոր քայլ էր Հայկական համաշխարհային կոնգրեսը, որը Ամերիկայի հայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ գումարվեց 1947թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը, Նյու Յորքում: Կոնգրեսին մասնակցում էին 715 պատգամավոր՝ 22 երկրից, որոնք ներկայացնում էին 70 կենտրոնական կազմակերպություն և 275 մասնաճյուղ, 31 եկեղեցի: ՀՀԴ-ն կոնգրեսին չէր մասնակցում: Հայկական համաշխարհային կոնգրեսը բացվեց Ուոլդորֆ Ասթորիա հյուրանոցում, որտեղ, ի թիվս այլ հռետորների, հանդես եկավ սենատոր Չարլզ Թոբին: Նա ընդգծեց հայերի մատուցած ծառայությունները երկու համաշխարհային պատերազմներում, արտահայտվեց հօգուտ Հայկական հարցի արդարացի լուծման և Մեծ տերություններին կոչ արեց՝ Հայկական հարցն այլևս չզոհել իրենց շահադիտական նկրտումներին: Կոնգրեսը քննարկեց ներգաղթի և վերաշինության, Խորհրդային Հայաստան-սփյուռք մշակութային հարաբերությունների ընդլայնման հարցերը, առաջարկեց ՄԱԿ-ի ուշադրությանը հանձնել հայկական հողային պահանջները և ընդունեց համապատասխան որոշումներ:[30]

Հայկական համաշխարհային կոնգրեսին հեռագրով ողջունել էին Խորհրդային Հայաստանի կառավարությունը և Գևորգ Զ կաթողիկոսը: Մայիսի 12-ին հատուկ պատվիրակությունը հուշագրով ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դին Աչեսոնին ներկայացրեց կոնգրեսի հիմնական որոշումը՝ ամերիկյան կառավարությանը խնդրել ՄԱԿ-ի օրակարգի մեջ մտցնել հայկական հողային պահանջների հարցը: Աչեսոնն ակնարկեց այն «մեծ դժվարությունները», որոնք ծառացած էին այդ հարցի լուծման ճանապարհին՝ ԱՄՆ-ի որդեգրած նոր քաղաքական ուղղության տեսակետից (նա նկատի ուներ նույն՝ ապրիլին ընդունված «Տրումենի դոկտրինան», որը «կոմունիստական վտանգից» պաշտպանելու պատրվակով 400 մլն. դոլարի օգնություն էր նախատեսում Հունաստանին և Թուրքիային՝ երաշխավորելով նրանց տարածքային ամբողջականությունը): Հուշագիրը հանձնվեց նաև ՄԱԿ-ի քարտուղարություն:[31]

Սկսված «սառը պատերազմի» պայմաններում Թուրքիայի նկատմամբ յուրաքանչյուր հողային պահանջ դիտվում էր որպես «կոմունիզմի ծավալում»: Այսպիսով Թուրքիայի պաշտպան կանգնած Արևմուտքի տերությունները և ԱՄՆ-ն նորից դառնում են հայերի արդարացի պահանջներին հակազդող ուժեր:

Ամփոփելով՝ կարելի է միանշանակ նշել հետևյալ պարագաները.

• Սփյուռքի հայկական կազմակերպությունները գիտակցում էին, որ աշխարհի հետպատերազմյան խաղաղության և անվտանգության հարցերը կախված են երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համագործակցությունից, և որ բոլոր կարևոր միջազգային

հարցերը կարող են լուծվել այդ տերությունների համաձայնեցված գործողություններով: Դրա համար նրանք հատուկ նշանակություն էին տալիս Մեծ տերությունների ղեկավարներին ուղերձներ հղելուն, որովհետև վստահ էին, որ այդ տերությունների ղեկավարները հաշվի կառնեն հայերի արդարացի պահանջները և այս անգամ վերջնականապես կվերացնեն այն մեծ անարդարությունը, որ անցյալում թույլ էր տրվել հայ ժողովրդի հանդեպ:

• Փաստաթղթերի ուսումնասիրությունը հավաստում է, որ այդ կազմակերպություններն, իրոք, հավատում էին, թե հայկական պատմական տարածքների հիմնախնդրի լուծման գործում գլխավոր դերը խաղալու է ԽՍՀՄ-ը: Նրանք ուղղակի հայտարարում էին, որ ԽՍՀՄ-ը փոքր ազգերի ու երկրների միակ պաշտպանն է, մասնավորապես՝ հայ ժողովրդի փրկիչը: Հայկական սփյուռքը վստահ էր, որ Խորհրդային կառավարությունը ոչ միայն կպաշտպանի հայ ժողովրդի պահանջները, այլև կիրագործի նրա դարավոր երազանքը:

• Բոլոր հայկական կազմակերպությունները, առանց բացառության, պահանջում էին հայկական տարածքները՝ Կարսը, Արդահանը, Վանը, Էրզրումը, Տրապիզոնը, Բիթլիսը վերամիավորել Խորհրդային Հայաստանին, այսինքն մտցնել ԽՍՀՄ-ի կազմի մեջ:

• Բոլորը այդ պահանջները կապվում էին աշխարհով մեկ սփռված 1,5 միլիոն հայերի հայրենադարձության և հայրենիք վերադառնալու ձգտման հետ: Իրենց ուղերձներում նրանք նշում էին այն հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանը չափազանց փոքր է ավելի քան մեկ միլիոն հայերի տեղավորման համար, որ հայերի հայրենադարձությունը հնարավոր է միայն հայկական տարածքների վերադարձմամբ:

• Այդ ուղերձները հավաստում են նաև, որ սփյուռքահայությունն անկեղծորեն ցանկանում էր ապրել և ստեղծագործել ԽՍՀՄ-ում, իր գործն ու եռանդը միավորել Խորհրդային Հայաստանի բնակչության աշխատանքին:

• Ի վերջո հարկ է նշել, որ հերթական անգամ հայ ժողովրդի արդարացի պահանջները զոհաբերվեցին Մեծ տերությունների սեփական շահերին, նրանց շահադիտական նկրտումներին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 034, գ. 95, թթ. 203-205:
[2] Նույն տեղում, g. 26, գ. 47, թ. 146:
[3] Նույն տեղում, g. 034, գ. 95, թթ. 178-179:
[4] «Սովետական Հայաստան», 1945թ., 13 հունիսի:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 26, գ. 47, թ. 148:
[8] Նույն տեղում, թ. 109:
[9] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 26, գ. 47, թ. 110:
[10] Նույն տեղում, թ. 108:
[11] Նույն տեղում, թ. 128:
[12] Նույն տեղում, թթ. 111-112:

[13] Նույն տեղում, թ. 112:
[14] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թ. 113:
[15] Նույն տեղում, թ. 154:
[16] Նույն տեղում, թ. 143:
[17] Նույն տեղում, թթ.119-124, 157:
[18] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց. 26, գ. 47, թ. 158:
[19] Նույն տեղում, թթ. 126-128:
[20] Նույն տեղում, թթ. 135-137,157:
[21] Նույն տեղում, ց. 034, գ. 95, թ. 273:
[22] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թթ. 134,142:
[23] Նույն տեղում, ց. 034, գ. 95, թթ. 219-224:
[24] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 47, թթ. 217-218:
[25] Նույն տեղում, թ. 159:
[26] Նույն տեղում, թ. 159:
[27] Նույն տեղում:
[28] Նույն տեղում, թ. 145:
[29] Նույն տեղում, թ. 122:
[30] «Էջմիածին», 1947, N 7-8, էջ. 38-39:
[31] «Ժողովուրդ», Փարիզ, 1947, 13 հունիսի:

Резюме

Роль армянской диаспоры в деле возрождения Армянского вопроса 1945-1947гг.

Аматун Вирабян

На заключительном этапе Второй мировой войны в кругах армянской диаспоры еще более укрепляется вера в освобождение армянских территорий от турецкого владычества, стремительно расширяется активность преследования Армянского вопроса.

Армянские организации направляют меморандумы, письма и телеграммы конференции ООН в Сан-Франциско, Берлинскому (Потсдамскому) конгрессу Великих держав, совещаниям министров иностранных дел, требуя Армянский вопрос сделать предметом обсуждения, армянские территории присоединить к Советской Армении, содействовать армянам, рассеянным по всем странам, возвратиться на свою историческую Родину.

Однако, в условиях начавшейся "холодной войны" любые территориальные претензии рассматривались как "расширение коммунизма" и стоявшие на страже Турции державы Запада и США вновь становятся противниками справедливых требований армян.

Summary

The Role of the Armenian Diaspora in Raising the Armenian Issue Again in 1945-1947.

Amatun Virabian

At the last stage of World War II, the faith of the Diaspora circles in possibility of liberation of the Armenian territories from Turkish domination, strengthened. A wave of activities, aiming at presenting the essence of the Armenian issue to the world community, obtained a new power.

Armenian organizations started to send memorandums, letters and telegrams to the United Nations San Francisco conference, the Berlin (Potsdam) congress of the leaders of the Great Powers, deliberations of Ministers for Foreign Affairs, demanding to discuss the Armenian issue, to join the Western

Armenian territories to Soviet Armenia and to resettle Armenians, having spread in different parts of the world, in their ancestral homeland.

However, under conditions of "cold war" any territorial claim from Turkey was regarded as "Communism extension", and the Western Powers as well as the USA, being the protectors of Turkey became once more the sworn enemy of Armenians' fair claims.